

կամ Հատակների կախումով, այլ և միևնույն (Հաստատուն կամ փոփոխական) բնակավայրն ունենալով՝ նրանք կազմում են ճշ միայն ընդունելի ալլ և բազմաթիվ խումբ: Այս բնաստրափոխուն ունին, ինչպէս տեսանք՝ կլանը, իրլանդական սեպտերը, գիւղական Համայնքները, սեռերը և բոլոր փոքր ի շատէ նախնական բնկերակցութիւնները, որոնք, թէև յաւելանալէ՝ կառավարում են ազգակցական կապերով, բայց երբեք պահպանում են արեան ընդհանրութեամբ և բնակավայրի համկէցութեամբ:

Ե Ջ Ր Ա Վ Ա Յ Ո Ւ Թ Ի Ն

Աս ալլես լիմ խոտելու քաղաքական Հաստրափոխեան բնութեան և ծագման մասին: Սակայն Հարկաւոր է պարզ կերպով Համառօտել այս երկար աւ բարդ Հետազոտութեան արդիւնքները: Քաղաքական Հաստրափոխիւնը նախնական է, որովհետև նա պատասխանում է մարդկային կեանքի մի մշտտեւ կարիքին, որ է ապրել Համայնքով մի փոփոխական կամ Հաստատուն տեղում, և միացած լինել մի կապով, որ երբեմնապէս տարբեր լինի արեւնակցական կապից: Քաղաքական Հաստրափոխիւնը սկզբում շփոթւում է բնտանեկան Հաստրափոխեան հետ. երկար ժամանակ սրանք յաւելանալէ լին որոշում և բացատրում են մինը միւսով: Իսկապէս պարզ որոշումը տեղի է ունենում՝ երբ նախնական խառնաշփոթ և անկերպարան Համայնքը աւելի կամ պակաս զիտակցարար զանազանկերպութեամբ կազմում է երկու տիպ. 1) բնտանեկան Համայնք կամ գերդատան, Հետեւանք սեռերի միութեան բնագրական գործակցութեան, որի նպատակն է Հաշտեցնել (consilier) Հատակի

*) Պէտք է բոլոր հասարակական խմբերի մէջ, ինչպէս անհատի մէջ, հիշելով ներքին տարրի հետ միասին ի նկատ առնել և որոշել. ինչպէս որ անհատի կեանքը արդիւնք է նրա նախնայի, աւելացրած միջավայրի՝ աշխարհ և խմբեր արդիւնք է նախ միջավայրի՝ իւր բոլոր բարդ աւարներով:

տարբերութիւնները. և 2) միեւնոյն տեղում ապրելու հասարակութիւնը, որ ձգտում է հաստատուն դարձնել այս բնականութիւնը մի որոշ երկրի վրայ. որանից է առաջ զայիս բոլոր գրողներէց ճանաչուած այն կարեւորութիւնը, որ ունի թափառական կեանքը նստակեցացի փոխակից՝ իսկապէս քաղաքական հասարակական կազմակերպութիւն հաստատուելու համար: Այս տարբերութիւնը համայնակեցութիւնը, բացի գրածից, հաստատում է իրաւարանական մի կորիզ, որ բարեւում և ձեւակերպում է ընդհարումներից ուրիշ նմանների հետ, որի ժամանակ նա կատարելագործում է իւր կառավարչական կազմուածքը, եթէ միայն ինքը չէ լողթւում և նայն իսկ կազմալուծւում: Այս հասարակութիւնը երկատրամը յառաջանում է պատմութեան մէջ հասարակութիւն իրաւունքի և հանձնար իրաւունքի բաժանման ժամանակ, բայց առաջինի, (քաղաքական իրաւունքի) տիրապետութիւնից յետոյ և շնորհիւ ոչ այնքան պետութեան գոյութեան (որ այն ժամանակ քաղաքական կը լինէր), որքան նոյն ինքն հասարակական համայնակեցութեան: Բացի գրածից պէտք է նկատել որպէս մի զինամիական կենտրոն, անհատական անձնատրութեան անող զօրեղացումը:

Այն յառաջ խաղաղութիւնը կամ աւելի լաւ՝ այն էփոխօշիւան, որով հասարակական նախնական, անկապ և անկերպարան գրութիւնից զուրս են զալիս բնատանեկան հասարակութիւնը, քաղաքական զանազան հասարակութիւնները և նրանք, որոնք ունին ժամանակը նպատակներ՝—այս տարբեր տիպերի համար նոյն է միայն հիմնական սկզբունքներով: Պէտք է նկատել որ հասարակութիւնը արդիւնք է այն ներգործութեան, որ ինքնուրուշ առիթ է յիշելու հարկը հարկը հարկը հարկը հարկը վրայ:

Միմիայն հիմնական գծերի համադրական (synthétique) խմբումով, որոնք վերջիվերջոյ յառաջացնում են քաղաքական հասարակութիւններ, և ի նկատ առնելով գլխաւորապէս նրանց ներքին բարդութեան առաինանը և նրանց նպատակի ընդարձակութիւնը՝ կարելի է երեւակայել (հատկաւ) մի այնպիսի իդէալական կազմակերպութիւն, որ բովանդակէր բոլոր հասա-

բաժնի մասերը — այդ ինքնորէն քաղաքները (municipe), շրջանները, ազգերը, ազգերի միութիւնը, և մարդկային համայնաբանական պետութիւնը (կոմունա, Giner):

Սրանից կարելի է տեսնել, որ տեղեկացողը բնութագրութիւնը, որը ստանում է մարդկային հասարակութիւնը որպէս քաղաքական հասարակութիւն՝ բնական արժէք չունի՝ բնորոշ և առանձին պետութիւն կազմելու համար: Անշուշտ է, չէ կարելի մերժել, որ ձեռքով, որչափ անհնար է եղիւր քաղաքական պետութեան պարմանն է. դեռ աւելի, համախմբուելու (collectivité) զարգացումը այս երկրի վրայ պատճառ է դառնում քաղաքական պետութեան կազմակերպութեան. այս մի միջոց է մարդկային կեանքը երկրի վրայ կազմակերպելու: Այս պատճառով է, որ երկիրը այնպիսի բացառիկ կարեւորութիւն է ստանում. նա երբեմն, ինչպէս յունական հասարակագիտութիւնների մէջ, դառնում է պետութեան շրջապատը, երբեմն, ինչպէս ուրիշ տեղեր, նրա բացառիկ տեղականութիւնը. տեղեկացողի կողմից զարգացողը վերջի վերջոյ այնպիսի ոյժ է ստանում, որ երկրի առանձնական տիրապետութիւնը դառնում է քաղաքական իշխանութեան հիմքը: Բայց ինչպէս որ պետութեան զարգացողը ինքն ըստ ինքեան խորապէս անհրաժեշտ է, քանի որ նրա նպատակն է միմիայն մարդկային կեանքի ազատ և փոխադարձ կարգաւորումն, այնպէս էլ քաղաքական պետութեան զարգացողը չէ նիւթականանում երկրով, հանդերձ այն բացառականութեամբ, որ նրան վերադրում են ներկայումս: Երկիրը, որպէս պետութեան նիւթական և արտաքին արտադրութիւն, մի քաղաքական պարման է, որովհետեւ պետութիւնը սահմանափակում է երկրով. բայց պետութիւնը չէ կարող լիովին որոշուել իւր մի որեւէ թանձրացնող արտադրութիւնով, ընդհանրապէս նա նրանց ընդգրկում է և բոլորին ներգաշնակութեան մէջ գնում. ուրեմն երկիրը և համայնքի առնցած առանձին յարաբերութիւնները իւր բնական երկրի հետ՝ միայն քաղաքական բնութեան որոշիչ նշաններ են և ոչ պետութեան բնութեան: Այժմ ովսիլ են այս հասկանալ նոյն իսկ գործնականապէս, չնայած այն բարձրագոյնին, որ

զեա տիրում է քաղաքական և գլխաւորապէս՝ տերրիտորիալ յարաբերութիւնների մէջ: Այժմ է ի նկատ առնել զանազան սահմանադրական պետութիւնների մէջ որից որ անոց *հագեցելիութեան* (pénétrabilité psychologique), միեւնոյն երկրի վրայ զանաւոր զանազան, մեծ և փոքր, պետութիւնների մէջ անդադար անոց ներգաշնակութիւնը, և այն ընդհանրակառութիւնը, որով պետութեան զաւարտարը ներկայանում է իրրեւ որեւի *համաշխարհային* կարգ: «Այն մարդը, տեսում է իհերիցը, որ արտօր ցանկանում է թողնել այն պետութիւնը, որին նա պատկանում էր, յետ չէ կանգնում իւր գլխաւորութիւնից՝ իւր իրաւունքները կորցնելու երկիւղից, որովհետեւ ամէն տեղ նա գտնում է մի իրաւական միջոցարտ, և ուր որ զնայ՝ իւր հետ տանում է իւր իրաւահաստութիւնը: Ընդհակառակը, հին ժամանակները, որինակ հռոմում, ալ որ կամեւում էր զուրա զալ այն պետութիւնից, որին պատկանում էր՝ պէտք է հրաժարուէր իւր իրաւունքներից և զուրա պէտք է զար այն իրաւական միջոցարտից, որը միայն այն պետութեան մէջ էր շնչում, և պէտք է ընկնէր մի գաւառակութեան մէջ, որ ամէն կողմից շրջապատում էր նրան. նա զուրա էր գալիս «վաղից» որպէսզի կորչի անապատում... Իրաւունքը և ազատութիւնը այսօր նոյնն են՝ ինչպէս օգն ու ջուրն են՝ նրանք *res communes omnium* (ամենքի ընդհանուր ստացուածքն են), որից օգտւում են բոլորը, բնիկ լինին թէ օտար երկրացի. որանք այնպիսի բաներ են, որ մենք հեշտութեամբ ենք ժուտնում, որովհետեւ մենք նրանց զանում ենք ամեն տեղ, և որոնք մեզ չեն կաշկանդում կապում մեր հայրենիքի հետ ինչպէս այն ժամանակներում, երբ միայն մեր հայրենի հողի վրայ կարող էինք նրանց գտնել »):

Կայ մի կէտ, որի վերաբերութեամբ քաղաքականութեան փոխադրանքները, մինչև անգամ իդիալիզմի ամենահակառակորդները, համաձայնում են, այսինքն, որ մարդկային մրցումները ոչնչացնելու միակ ամենալաւ միջոցն է՝ կազմել տակի ընդ-

*) *Esprit des droit romain*. 2. I Եր. 231.

արձակ և աւելի միատեսակ միութիւններ: Այն պետութիւնը, որ Հիմնաւած է իրաւունքի վրայ յատկապէս այն Հասարակական օրդանն է, որ ազատ յարաբերութիւնների անթերի կազմակերպութեան շնորհիւ, սրբազործում է բոլոր միութիւնները, որոնց մէջ այս մրցութիւնները աշխատում են:

Ծ. Լալայեան

(Փրանսերէնից)

— — — — —